ԵՐԵՎԱՆ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները օժտված երեխաների հետ

Ուսուցիչներ՝ Լուսիկ Մակյան

Աննա Գաբրիելյան

Աստղիկ Սահակյան

Սաթենիկ Զուրնաջյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….3

ԳԼՈՒԽ 1. Օժտված երեխան որպես մանկավարժական գործունեության օբյեկտ . . . . . .……..……..5

1.1. Սոցիալական մանկավարժի աշխատանքի հիմնական ուղղությունները օժտված երեխաների հետ …….…….23

1.2. Սոցիալական մանկավարժի աջակցությունը օժտված երեխաներին…...…….……..32

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1. Հետազոտության նախապատրաստում և փորձարարական աշխատանքի նկարագրություն……...39

2.2. Հետազոտության տվյալների վերլուծություն ……

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..

ՀԱՎԵԼՎԱԾ……..

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունն ու ընտրության հիմնավորումը:

Ներկայումս մանկավարժության մեջ ընդգծվում է հետաքրքրությունը <<օժտվածություն>> խնդրի ուսումնասիրման նկատմամբ, որն արտացոլում է մարդկանց ստեղծագործական պոտենցիալի բացահայտման և զարգացման հասարակության պահանջը: Օժտված երեխաների հետ մանկավարժի աշխատանքը կրթության համակարգի կատարելագործման, հետևաբար նաև հասարակության և պետության զարգացման կարևորագույն խնդիրներից մեկն է: Համապատասխան սոցիալական պայմանների բացակայության դեպքում օժտվածությունը չի դրսևորվում և ընդունակությունների զարգացման չի հանգեցնում: Հարկավոր է նման երեխաներին ժամանակին նկատել, բացահայտել և ճիշտ ուղղորդել նրանց զարգացումը:

Օժտված երեխաները հատուկ ուշադրության և աշխատանքի կարիք ունեն: Ուստի, անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել օժտված երեխաների հետ մանկավարժական գործունեության առանձնահատկություններին, քանի որ նրանք մեր հասարակության անբաժան և անփոխարինելի անդամներն են: Օժտված երեխաների վաղ բացահայտումը, ուսուցումն ու դաստիարակությունը կազմում է կրթության համակարգի զարգացման հեռանկարային ուղղություններից մեկը, միաժամանակ հանդիսանում է անձի սոցիալականացման հիմնական գործոններից մեկը: Օժտված երեխաների հետ աշխատանքի ամբողջական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը առավել ակտուալ և ակնհայտ է դառնում, քանի որ կրթության համակարգի ներկայիս փոփոխությունների ժամանակաշրջանում շեշտը դրվում է անձի գերակայության սկզբունքի վրա: Ուստի բավականին արդիական է դարձել օժտված երեխաներին բնորոշ առանձնահատկությունների, օժտված երեխաների ընդունակությունների զարգացմանն ու արդյունավետ սոցիալականացմանն ուղղված մանկավարժական գործունեության առանձնահատկությունների ուսումնասիրումը:

Հետազոտության նպատակը:

Հետազոտության նպատակը օժտված երեխաների հետ մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունների ուսումնասիրումն ու արդյունավետության

ապահովումն է:

Հետազոտության խնդիրները:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել օժտված երեխաների՝ որպես մանկավարժական գործունեության օբյեկտի առանձնահատկությունները, տեսակները,
- Դիտարկել մանկավարժի աշխատանքի ուղղություններն ու առանձնահատկությունները օժտված երեխաների հետ,
- Բացահայտել օժտված երեխաներին մանկավարժի աջակցության էությունը:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Աշխատանքն կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալն է …էջ:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՕԺՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

1.1. Օժտված երեխան որպես մանկավարժական գործունեության օբյեկտ

Ժամանակակից պայմաններում ինչպես գիտության, այնպես էլ հասարակության առջև ծառացած արդիական հիմնախնդիրներից մեկն օժտվածության երևույթն է: <<Օժտվածություն>> խնդիրն ուսումնասիրվում է այնպիսի գիտությունների կողմից, ինչպիսիք են հոգեբանությունը, մանկավարժությունը, սոցիոլոգիան, փիլիսոփայությունը, սոցիալական մանկավարժությունը և մի շարք այլ գիտությունների կողմից, որոնց ուսումնասիրության օբյեկտը մարդն է: Չնայած խնդրի արդիականությանը, այն բավարար չափով ուսումնասիրված չէ:

Օժտվածությունը դեռևս չունի որևէ կոնկրետ սահմանում, քանզի այն, ըստ էության, դժվար վերծանելի ու բազմաբնույթ երևույթ է: Նախկինում փոքր է եղել այն համարձակների թիվը, որոնք զբաղվել են այս աննախադեպ երևույթի ուսումնասիրությամբ: Այսօր, անկասկած, գնալով աճում է նման հետաքրքրասերների բանակը [1. էջ 88]: <<Օժտված երեխաները մեր հասարակության անբաժան ու անփոխարինելի անդամներն են: Ուստի, նրանք հատուկ ուշադրություն են պահանջում: Նրանց ճիշտ դաստիարակությունն անխուսափելիորեն հետագայում կտա իր դրական արդյունքները>> [1. էջ 92]:

Օժտվածություն հասկացությունը ձևավորվել է 19-րդ դարի կեսերին անգլիացի հոգեբան Ֆրենսիս Գալտոնի կողմից: <<Օժտվածությունը մարդու ընդունակությունների զարգացման մակարդակն է, որն կապված է դրանց զարգացման հետ, բայց այնուամենայնիվ դրանցից կախված չէ>> [9. էջ 37]: Նա առաջինն էր, ով իր <<Տաղանդի ժառանգումը, նրա օրենքներն ու հետևանքները>> գրքում փորձեց ապացուցել, որ ընդգծված ընդունակությունները(տաղանդը) առաջին հերթին ժառանգական գործոնների ազդեցության արդյունքն են [16. էջ 16]:

Օժտվածությունը առաջացել է պարգև բառից (բնության պարգև, Աստծու պարգև): Անգլերենում, նույնպես, օժտվածություն տերմինը ծագում է պարգև բառից (giftedness-օժտվածություն, gift-պարգև): Ինչ-որ իմաստով օժտվածությունն իսկապես

պարգև է: Սակայն, նրա դրսևորման համար բնության կողմից յուրահատուկ ընդունակություններով օժտված երեխային անհրաժեշտ է, որպեսզի ընտանիքը պատրաստ լինի զարգացնել այդ ընդունակությունները: Իսկ ուսուցիչները պետք է կարողանան տեսնել օժտվածությունը և չվախենան դրանից: Միայն այդ պայմաններում է դրսևորվում իրական օժտվածությունը, սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, նման դեպքերը շատ քիչ են [19. էջ 4]:

<<Օժտվածությունը տաղանդավոր անձի հիմնական առանձնահատկությունն է, որն թույլ է տալիս նրան զարգացնել սեփական տաղանդը առավել բարձր մակարդակներում>> [11. էջ 13]: <<Օժտվածությունը ընդունակությունների զարգացման մակարդակն է, որն սահմանում է գործունեության այն շրջանակները, որոնցում մարդը կարող է ձեռք բերել մեծ հաջողություններ>> [8. էջ 67]:

Մանկավարժության մեջ օժտվածության խնդիրը դիտարկվել է այնպիսի գիտնականների կողմից, ինչպիսիք են Ե. Ս. Բելովան, Դ. Բ. Բոգոյավլենսկայան, Ա. Ի. Սավենկովը, Ա. Վ. Խոտորսկին: <<Օժտվածությունը սահմանվում է որպես մտավոր զարգացման նշանակալիորեն առաջընթաց լինելը կամ առանձնահատուկ ընդունակությունների բացառիկ զարգացումը(երաժշտական, ստեղծագործական և այլն), մարդու ընդունակությունների զարգացման բարձր մակարդակը գործունեության այս կամ այն ոլորտում՝ տարիքային նորմերի հետ համեմատած>> [12. էջ 521-542]: Համաշխարհային մանկավարժության մեջ օժտվածության առավել հայտնի ժամանակակից տեսական մոդելների թվին կարելի դասել ամերիկացի գիտնական Ջ. Ռենզուելիի մշակած հայեցակարգը: Ըստ Ջ. Ռենզուելիի տեսության օժտվածությունը երեք հիմնական բնութագրիչների համադրումն է.

- մտավոր ընդունակություններ (որոնք միջին մակարդակից բարձր են),
- ստեղծագործական ընդունակություններ,
- համառություն (մոտիվացիան, կենտրոնացումը առաջադրանքի վրա) [16. էջ 32-36]:

Բացի դրանից, նրա տեսական մոդելում կարևորված են նաև գիտելիքը և բարենպաստ միջավայրը: Ջ. Ռենզուլիի մշակած հայեցակարգը ենթադրում է, որ օժտված երեխաների քանակը միաժամանակ կարող է շատ ավելի մեծ լինել բոլոր՝ ինտելեկտուալ թեստերի, ստեղծագործական ընդունակությունների և

ձեռքբերումների արդյունքում որոշվածներից: Հեղինակն առաջարկում է օժտվածների մեջ դասել այն երեխաներին, որոնք այդ բնութագրիչներից թեկուզ մեկով բարձր ցուցանիշներ ունեն:

Այդ հայեցակարգը շատ հայտնի է և ակտիվորեն օգտագործվում է կիրառական խնդիրների մշակման համար: Բավականին մանրամասն նկարագրելով օժտվածության էությունը՝ Ջ. Ռենզուլիին ցույց է տալիս նաև նրա զարգացման մանկավարժական աշխատանքի ուղղությունները: Հետաքրքիր է, որ Ջ. Ռենզուելին <<օժտվածություն>> եզրույթը փոխարինել է <<ներուժ>> եզրույթով: Դա վկայում է, որ այս հայեցակարգը ոչ միայն օժտված երեխաների, այլ նաև մյուս երեխաների դաստիարակության և ուսուցման համակարգի մշակման համար կիրառելի յուրահատուկ բազմակողմանի ծրագիր է:

Օժտվածության զարգացման առումով հատկապես կարևոր է, որ վերջին ժամանակներս շատ հետազոտողներ ընդունում են այն տեսակետը, որի համաձայն անհատի ներուժի հիմնական բնութագրիչը պետք է համարել ոչ թե աչքի ընկնող մտավոր կամ ստեղծագործական ընդունակությունները, ինչպես նախկինում, այլ գործունեության մոտիվացիան:

Այսպես, օրինակ որոշ գիտնականներ նշում են, որ ի սկզբանե ավելի քիչ ընդունակ, սակայն սեփական, անձնական, կարևոր խնդիրը նպատակասլացորեն լուծող մարդիկ ի վերջո ավելի արտադրողական են լինում, քան շնորհալի, բայց ավելի քիչ հետաքրքրվողները: Այսինքն՝ հաճախ առավելագույն կերպով իրականացնում է իր ներուժը և հետևաբար բարձունքների է հասնում ոչ թե նա, ով ավելի զարգացած է, այլ նա, ով ավելի հաստատուն է, ով համառորեն գնում է դեպի իր ընտրած նպատակը [16. էջ 32-36]:

Այսպես, ըստ Ա. Մ. Մատյուշկինի ցանկացած օժտվածություն ստեղծագործական է՝ <<Եթե չկա ստեղծագործականություն, անիմաստ է խոսել օժտվածության մասին>> [14]:

Ն. Ս. Լեյտեսն առանձնացնում է երեխաների 3 տեսակներ, որոնց մանկավարժական պրակտիկայում սովորաբար ընդունված է անվանել օժտված՝

1. Այն երեխաները, որոնց բնորոշ է IQ-ի բարձր մակարդակը,

2. Այն երեխաները, որոնք ձեռք են բերել ակնհայտ հաջողություններ գործունեության որևէ տեսակում,
3. Այն երեխաները, որոնց բնորոշ է բարձր ստեղծագործականությունը [13. էջ 7]:

Ինտելեկտի հոգեբանության ոլորտի մեկ այլ մասնագետ Մ. Ա. Խոլոդնայան պնդում է, որ անհրաժեշտ է առանձնացնել օժտված երեխաների 6 տեսակներ՝

1. Սրամիտներ,
2. Հիանալի սովորողներ,
3. Ստեղծագործականներ,
4. Կոմպետենտներ(մտահասներ),
5. Տաղանդներ,
6. Իմաստուններ [16. էջ 66-67]:

Երեխաների օժտվածության խնդիրների ուսումնասիրմամբ զբաղվող հոգեբաններն ու մանկավարժները կողմ են օժտվածության այն սահմանմանը, որն առաջարկվել է ԱՄՆ-ի կրթության հանձնաժողովի կողմից(Մերլանդ, 1977): Այդ սահմանման էությունն այն է, որ երեխայի օժտվածությունը կարող է սահմանվել մասնագիտական պատրաստվածություն ունեցող մարդկանց կողմից ըստ հետևյալ չափանիշների՝

- Ընդգծված ընդունակությունները,
- Մեկ կամ մեկից ավելի ոլորտներում(մտավոր ընդունակությունները, ուսուցման նկատմամբ առանձնահատուկ ընդունակությունները, ստեղծագործական կամ արտադրողական մտածողությունը, ստեղծագործական և կատարողական արվեստի նկատմամբ ընդունակությունները, հոգեմոտորային ընդունակությունները) բարձր արդյունքների ձեռքբերման պոտենցիալ հնարավորությունները և արդեն իսկ ձեռքբերումների ցուցադրումը [5. էջ 15-16]:

Ներկայումս՝ հասարակական կյանքի սոցիալական, տնտեսական և արտադրական ոլորտներում փոփոխությունների պայմաններում, առավել շատ է գնահատվում ինտելեկտը և ստեղծագործականությունը, աճում է հասարակության կողմից ստեղծագործ մարդկանց, օժտված երեխաների պահանջարկը: Օժտված երեխաների՝ որպես երկրի ինտելեկտուալ գենոֆոնդը կրողների բացահայտումը,

աջակցությունը, սոցիալիզացիան արդի պայմաններում պետության և հասարակության առաջնային խնդիրն է հանդիսանում:

ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ: Օժտվածության տեսակների առանձնացումը որոշվում է այն չափանիշներով, որոնք ընկած են օժտվածության դասակարգման հիմքում: Օժտվածության մեջ կարելի է առաձնացնել ինչպես որակական, այնպես էլ քանակական ոլորտները: Օժտվածության որակական առանձնահատկությունները արտահայտում են մարդու հոգեբանական հակումների և գործունեության այս կամ այն տեսակներում դրանց դրսևորման առանձնահատկությունները:

Իսկ օժտվածության քանակական առանձնահատկությունները թույլ են տալիս նկարագրել դրանց դրսևորման մակարդակը: Օժտվածության տեսակների դասակարգման չափանիշներից կարող ենք առանձնացնել հետևյալները.

- Գործունեության տեսակը և այն ապահովող հոգեկանի ոլորտները,
- Ձևավորվածության աստիճանը,
- Դրսևորման ձևը,
- Գործունեության տարբեր տեսակներում դրսևորման շրջանակը,
- Տարիքային զարգացման առանձնահատկությունները [11. էջ 13-18]:

Գործունեության հիմնական տեսակներն են՝ կիրառական և տեսական (հաշվի առնելով մանկան տարիքը, նախընտրելի է խոսել ճանաչողական գործունեության մասին), գեղարվեստա-գեղագիտական, հաղորդակցական և հոգևոր-արժեքային: Հոգեկանի ոլորտներն են՝ մտավոր, հուզական և մոտիվացիոն-կամային: Դրանց համապատասխան կարող են առանձնացվել օժտվածության հետևյալ տեսակները:

Կիրառական ոլորտում, մասնավորապես, կարելի է առանձնացնել արհեստների, սպորտային և կազմակերպչական օժտվածություն: Ճանաչողական գործունեության մեջ՝ ինտելեկտուալ օժտվածության տարբեր տեսակներ կախված գործունեության առարկայական բովանդակությունից (բնական և հումանիտար գիտությունների, ինտելեկտուալ խաղերի ոլորտում օժտվածություն և այլն) [16. էջ 66-67]: Սպորտային առանձնահատուկ ընդունակությունները հոգեշարժողական օժտվածությունն են: Ակադեմիական օժտվածությունը դրսևորվում է ուսման ոչ սովորական ընդունակություններում, որը ապագայում հիմք է հանդիսանում

հիանալի մասնագիտացման համար: Ինտելեկտուալ օժտվածությունը փաստերը համադրելու, վերլուծելու, մտածելու ընդունակությունն է [6. էջ 382-383]:

Ըստ գեղարվեստա-գեղագիտական գործունեության՝ պարարվեստի, թատերական, գրականագիտական, նկարչական և երաժշտական օժտվածություն:

Ըստ հաղորդակցական գործունեության՝ լիդերային և այլն:

Իսկ, ըստ հոգևոր-արժեքային գործունեության՝ այնպիսի օժտվածություն, որն դրսևորվում է նոր հոգևոր արժեքների ստեղծման և մարդկանց ծառայելու մեջ:

Ըստ օժտվածության ձևավորվածության աստիճանի՝

- Ակտուալ օժտվածություն,
- Հնարավոր(պոտենցիալ) օժտվածություն:

Ակտուալ օժտվածությունը երեխայի հոգեբանական առանձնահատկությունն է հոգեկանի զարգացման այնպիսի ցուցանիշներով, որոնք դրսևորվում են որոշակի առարկայական ոլորտում գործունեության իրականացման առավել բարձր մակարդակում՝ համեմատած տարիքային և սոցիալական նորմերի հետ: Տվյալ դեպքում այն վերաբերում է ոչ միայն ուսումնական, այլև գործունեության տեսակների լայն շրջանակին: Ակտուալ օժտվածությամբ երեխաների շարքին կարելի է դասել տաղանդավոր երեխաներին [16. էջ 66]: Տաղանդավոր դիտարկվում է այն երեխան, որի ձեռքբերումները համապատասխանում են օբյեկտիվ նորույթների և սոցիալական նշանակության պահանջներին [14. էջ 30]:

Հնարավոր օժտվածությունը երեխայի հոգեբանական այն առանձնահատկությունն է, որն գործունեության այս կամ այն տեսակում բարձր ձեռքբերումների համար ունի միայն որոշակի հոգեբանական հնարավորություններ (պոտենցիալ), սակայն ժամանակի տվյալ պահին չի կարող իրականացնել իր հնարավորությունները դրանց գործառնական անբավարարվածության պատճառով: Այդ պոտենցիալի զարգացումը ետ կարող է մնալ մի շարք անբարենպաստ պատճառներով՝ ընտանեկան պայմանները, ոչ բավարար մոտիվացիան, ինքնակարգավորման ցածր մակարդակը, անհրաժեշտ կրթական միջավայրի բացակայությունը և այլն: Պոտենցիալ օժտվածությունը դրսևորվում է բարենպաստ պայմաններում, որոնք ապահովում են որոշակիորեն զարգացնող ներգործություն երեխայի նախնական հնարավորությունների վրա [11. էջ 13-18]:

Ըստ դրսևորման ձևի կարելի է առանձնացնել օժտվածության հետևյալ տեսակները՝

- Բացահայտ,
- Թաքնված:

Բացահայտ օժտվածության դեպքում երեխայի գործունեությունը բավականին վառ է դրսևորվում՝ նույնիսկ անբարենպաստ պայմաններում: Երեխայի ձեռքբերումները այնքան ակնառու են, որ նրա օժտվածությունը կասկածներ չի առաջացնում: Սակայն, միշտ չէ, որ օժտվածությունը դրսևորվում է ակնհայտ ձևով: Թաքնված օժտվածությունը դրսևորվում է ոչ տիպական, քողարկված ձևով, այն չի նկատվում շրջապատողների կողմից [14. էջ 30-33]:

Թաքնված օժտվածությունը բաց համարյա չի դրսևորվում: Երբ նման երեխան ընտանիքում է, ապա նրան շրջապատողները մեծ դժվարություններ են ապրում: Դրանք ֆանատիկներն են, որոնք տարված են որևէ գործով: Վերջին ժամանակներս դրսևորվում են համակարգչային բազմաթիվ ֆանատիկներ: Կան նաև ծույլերը, որոնք քաղում են ցանկացած ինֆորմացիա, սակայն ոչինչ չեն ցանկանում անել: Համեստիկները ցածր ինքնագնահատականով երեխաներն են, որոնք ձգտում են չցուցադրել իրենց: Կա նաև մեկ այլ տիպ՝ նևրոտիկներ կամ նույնիսկ պսիխոպատները, որոնք մշտապես կոնֆլիկտի մեջ են մտնում ընտանիքում և շրջապատողների հետ: Տարօրինակները հանգիստ, նուրբ երեխաներն են, որոնք չեն սիրում կոնֆլիկտներ [6. էջ 382-390]:

Կարևոր է, որպեսզի այդ թաքնված օժտվածության մասին իմանան ընտանիքում, քանի որ այդ երեխաներին անհրաժեշտ է մեծահասակների, ծնողների, դաստիարակների, սոցիալական մանկավարժների օգնությունը:

Ըստ գործունեության տարբեր տեսակներում դրսևորման շրջանակի՝

- Ընդհանուր օժտվածություն,
- Հատուկ օժտվածություն:

Ընդհանուր օժտվածությունը դրսևորվում է գործունեության տարբեր տեսակների նկատմամբ և հանդես է գալիս որպես դրանց արդյունավետության հիմք: Ընդհանուր օժտվածության կարևոր ոլորտներն են մտավոր ակտիվությունը և նրա ինքնակարգավորումը: Ընդհանուր օժտվածությունը համապատասխանաբար սահմանում է շրջապատող իրադարձությունների ընկալման մակարդակը,

մոտիվացիոն և հուզական ներգրավվածությունը գործունեության մեջ, նրա նպատակաուղղվածության աստիճանը: Հատուկ օժտվածությունը դրսևորվում է գործունեության որոշակի տեսակներում և սովորաբար որոշվում այլ ոլորտների հետ համեմատության հիման վրա(պոեզիա, մաթեմատիկա, սպորտ, հաղորդակցում և այլն):

Ըստ տարիքային զարգացման առանձնահատկությունների կարելի է առանձնացնել օժտվածության հետևյալ տեսակները՝

- Վաղ օժտվածություն,
- Ուշ օժտվածություն:

Այստեղ որոշիչ չափանիշ է հանդես գալիս երեխայի հոգեկան զարգացման տեմպը, ինչպես նաև այն տարիքային փուլերը, որոնցում օժտվածությունը դրսևորվում է առավել ակնհայտ ձևով: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ հոգեկանի արագ զարգացումը և համապատասխանաբար օժտվածության վաղ բացահայտումը միշտ չէ, որ կապված են մեծ տարիքում բարձր ձեռքբերումների հետ [16. էջ 66-69]: Իր հերթին, մանկական տարիքում օժտվածության վառ դրսևորումների բացակայությունը դեռևս չի նշանակում, որ պետք է բացասական եզրակացություն անել անձի հոգեկան զարգացման հետագա հեռանկարների վերաբերյալ: Գործունեության ոլորտի և այն տարիքի միջև, որում դրսևորվում է օժտվածությունը, գոյություն ունի որոշակի կախվածություն: Օժտվածությունը առավել վաղ է դրսևորվում է արվեստի ոլորտում, հատկապես երաժշտության: Ավելի ուշ է դրսևորվում նկարչական արվեստի ոլորտում: Գիտության մեջ նշանակալի արդյունքների ձեռքբերումը ակնառու հայտնագործությունների, հետազոտության նոր ոլորտների և մեթոդների և այլնի տեսքով սովորաբար ավելի ուշ է տեղի ունենում, քան արվեստում: Դա կապված է, մասնավորապես, խորը և լայն գիտելիքների գիտելիքների ձեռքբերման անհրաժեշտության հետ, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել գիտական հայտնագործություններ: Այս դեպքում մյուսներից առավել վաղ է դրսևորվում մաթեմատիկական օժտվածությունը [3. էջ 73]:

Այսպես, օժտվածություն երևույթն ուսումնասիրելիս անհրաժեշտ է դիտարկել նաև ընդունակություններ, տաղանդ, հանճար հասկացությունները: Ընդունակությունները անձի անհատական հոգեբանական առանձնահատկություններն ու գործունեության ներհոգեկան պայմաններն են,

որոնցով մարդիկ տարբերվում են միմյանցից: Ընդունակություններն այնպիսի առանձնահատկություններն են, որոնք հնարավոր են դարձնում որոշակի գործունեության հաջող կատարումը: Ընդունակությունը չի հանգեցնում գիտելիքների ու հմտությունների, բայց բացատրում է դրանց ձեռք բերման դինամիկան (արագությունը, ծավալը, հեշտությամբ մտապահելը և այլն):

Ընդունակությունների զարգացումը մի գծով չի ընթանում: Առանձնացնում են ընդունակությունների զարգացման երեք մակարդակներ՝ 1. Օժտվածություն, 2. Տաղանդ, 3. Հանճար:

Օժտվածությունը ընդունակությունների դրսևորման բարձր մակարդակն է, որն ապահովում է գործունեության հաջող իրականացման հնարավորությունը: Այսպես, օժտվածությունը կազմում է ընդունակությունների զարգացման առաջին մակարդակը, որը բնորոշ է երեխաների մեծամասնությանը զարգացման վաղ շրջանում շնորհիվ իրենց անհատական-հոգեբանական առանձնահակությունների և հակումների [22.]: Օժտված անվանում են այն մարդուն, ով գործունեության տվյալ տեսակի նկատմամբ ունի հակումներ: Օժտված լինել, դեռևս չի նշանակում ընդունակ լինել իրականացնելու համապատասխան գործունեությունը: Դա միայն նշանակում է, որ մարդը կարող է հեշտությամբ յուրացնել գործունեության տվյալ տեսակը և նրանում հասնել էական հաջողությունների [23.]:

Ընդունակությունների դրևորման հաջորդ մակարդակը բնութագրվում է <<տաղանդ>> հասկացությամբ: Տաղանդը (լատ. talanton-առաջնային նշանակությունը՝ քաշ, միջոց, փոխաբերական իմաստով՝ ընդունակությունների մակարդակ) ընդունակությունների համադրությունն է, որն մարդուն հնարավորություն է տալիս հաջողությամբ, ինքնուրույն և յուրահատուկ ձևով իրականացնել որևէ բարդ գործունեություն: Տաղանդը դրսևորվում է որևէ գործունեության մեջ, և որպես կանոն, այս կամ այն չափով ծագում և զարգանում է այն օժտված երեխաների մոտ, որոնք սկսում են ակտիվորեն սովորել և զբաղվել այն գործունեությամբ, որն նպաստում է նրանց տաղանդի բացահայտմանը: Տաղանդն ոչ միայն հակումների, այլև արդեն իսկ զարգացած ընդունակությունների տիրապետումն է [22.]: Տաղանդավոր է այն մարդը, ով պրակտիկորեն ապացուցել է, որ բավական հաջողությամբ կարող է իրականացնել տվյալ գործունեության տեսակը: Ավելին, նրան կարելի է տաղանդավոր անվանել միայն այն դեպքում, երբ նա զգալի

հաջողությունների է հասել գործունեության տվյալ տեսակում [23.]:

Տաղանդի հետագա զարգացումից ծագում է ընդունակությունների դրսևորման ամենաբարձր մակարդակը՝ հանճարը (լատ. genius-ոգի): Հանճարը ընդունակությունների զարգացման բարձր մակարդակն է, որն հնարավորություն է ստեղծում անձի կողմից այնպիսի արդյունքների ձեռքբերման համար, որոնք հասարակության կյանքում, գիտության և մշակույթի զարգացման մեջ նոր շրջան են բացում [22.]:

Օժտված կարող է լինել երեխան, մարդը, ով նոր-նոր է յուրացնում համապատասխան գործունեությունը, իսկ տաղանդավոր, որպես կանոն՝ մեծահասակ մարդը, գիտնականը, գրողը, նկարիչը և ցանկացած այլ մասնագետ, ով իր աշխատանքով ապացուցել է իր տաղանդը:

Հանճարը այն մարդն է, ով ոչ միայն տաղանդավոր է, այլև ձեռք է բերել իր ոլորտում առաջատար և նշանակալի հաջողությունների [23.]:

Տաղանդավոր մարդիկ հաճախ են հանդիպում գործունեության տարբեր ոլորտներում, նրանք հաջողությամբ իրացնում են իրենց, իսկ հանճարները խիստ հազվադեպ են հանդիպում: Դա իր արտացոլումն է գտել հետևյալ արտահայտության մեջ՝ <<Հանճար ծնվում են հարյուր տարին մեկ անգամ>> [22.]:

Այսպես, ընդունակությունների զարգացման և կատարելագործման գործընթացում միայն քիչ մարդիկ են հասնում դրանց զարգացման բարձրագույն մակարդակին: Այդ իսկ պատճառով սոցիալ-մանկավարժական աշխատանքի կարևորագույն խնդիրներից է օժտված երեխաների վաղ բացահայտումը, որպեսզի շարունակվի նրանց հատուկ ուսուցումն ու դաստիարակությունը ընդունակությունների հետագա զարգացման նպատակով:

Օժտված երեխաների առանձնահատկությունները: Օժտված երեխաները շատ տարբեր են: Կարող են շատ աշխույժ լինել, երբեմն էլ համեստ և նույնիսկ անպատկառ լինել: Ըստ Յուրկևիչի օժտվածությունը հիմնականում որոշվում է 3 փոխկապակցված չափանիշներով՝

1. Գիտելիքների(ճանաչողության) առաջատար զարգացումը,
2. Հոգեբանական զարգացումը,
3. Ֆիզիկական տվյալները [5. էջ 15-16]:

Գլխավոր առանձնահատկությունը, որն և՛ միավորում է բոլոր օժտված երեխաներին, և՛ առանձնացնում է նրանց հասակակիցներից մտավոր ակտիվությունն է: Ն. Ս. Լեյտեսն առաջիններից էր, որն նկարագրել է օժտված երեխաների մտավոր աշխատանքի նկատմամբ այդ պահանջմունքը, նրանց ձգտումը գիտելիքի նկատմամբ: Սա օժտված երեխայի գլխավոր պահանջմունքն է՝ անկախ տարիքից, խառնվածքից, հետաքրքրություններից, սեռից, առողջությունից և այլն: Այլ կերպ ասած, գիտելիքի նկատմամբ ձգտումը յուրաքանչյուր օժտված երեխայի ամենավառ առանձնահատկությունն է [13. էջ 37]: Որպես կանոն նրանց հարկ չկա ստիպել սովորել, նրանք իրենք են աշխատանք գտնում իրենց համար և շատ հաճախ բարդ և ինտելեկտուալ բնույթի: Նրանք սիրում են մտավոր աշխատանքը և դրանով էլ հաճախ վախեցնում են ծնողներին [6. էջ 382-383]:

Յուրկևիչն ընդգծում էր, որ մտավոր ակտիվությունը անմիջականորեն կապված է ընդունակությունների զարգացման հետ: Ընդունակությունները զարգանում են միայն մեկ պարտադիր պայմանի դեպքում: Գործունեությունը, որով երեխան զբաղվում է, պետք է կապված լինի դրական զգացմունքների հետ, այլ կերպ ասած պետք է հաճույք, բավարարվածություն պատճառի: Եթե կա այդ հաճույքը, ապա հակումներն զարգանում են: Եթե չկա հաճույք մտավոր գործունեությունից՝ ընդունակությունները չեն զարգանա: Երկար, ձանձրալի, ստիպողական կամ ինքնաստիպողական դասերից ինչ-որ բաներ արդյունավետ կլինեն՝ գերազանց գնահատականներ, գովեստներ, գիտելիքներ, սակայն չի լինի միայն գլխավորը՝ ընդունակություններ:

Այսպիսով, ըստ Յուրկևիչի՝ ընդունակությունների զարգացման առնվազն վաղ փուլերում՝ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում, ամեն ինչ կախված է մտավոր գործունեության կամ ավելի ճիշտ ճանաչողական պահանջմունքների նկատմամբ սիրուց: Երեխայի մեջ որքան այն վառ է դրսևորվում, այնքան մեծ է բարձր ընդունակությունների հավանականությունը [19. էջ 10-11]:

Օժտված երեխաներին բնորոշ է ինքնահիրացման ձգտումը: Բազմաթիվ հետազոտողներ սեփական ներքին հնարավորությունները բացահայտելու ձգտումը համարում են մարդու ստեղծագործականության գլխավոր մղող մոտիվը: Այդ կապի տեսանկյունից կարելի է ենթադրել, որ տվյալ ձգտման նախադրյալները դրսևորվում են արդեն իսկ մանկության շրջանում և պետք է պահպանվեն և ձևավորվեն հենց այդ

շրջանում [10. էջ 26]:

Գոյություն ունեն յուրահատուկ սենզիտիվ(զգայուն) շրջաններ, երբ երեխաներն <<քաղում>> են շրջապատից ամեն ինչ: Նրանք ընդունակ են միանգամից զբաղվել մի քանի գործերով: Բերտոն Ուայտը(1971) 6 տարեկան օժտված երեխաների հետազոտության իր լայնածավալ ծրագրի շրջանակներում բացահայտել է, որ 3 տարեկանում լավագույն նախանշանը ուսումնական հաջողություններից՝ ընդունակությունն է միաժամանակ հետևել շրջապատող միջավայրում տեղի ունեցող 2 կամ ավելի իրադարձություններին:

Նման երեխաները շատ հետաքրքրասեր են: <<Իսկ ինչպե՞ս է սա կառուցված>>, <<Ինչպե՞ս է այսպես պատահում>> և այլն: Նրանք ցանկանում են ակտիվորեն ուսումնասիրել իրենց շրջապատող աշխարհը: Հաճախ օժտված երեխան իր ուսումնասիրությունների նկատմամբ չի հանդուրժում որևէ սահմանափակում: Գիտնականները գտնում են, որ օժտված և տաղանդավոր երեխաների ուղեղի կենսաքիմիական ակտիվությունը առավել բարձր է: Օժտված երեխաները վաղ հասակում առանձնանում են պատճառա-հետևանքային կապերին հետևելու և համապատասխան եզրահանգումներ անելու ընդունակությամբ: Նրանք հատկապես հետաքրքրվում են այլընտրանքային մոդելների և համակարգերի ստեղծմամբ:

Օժտված երեխաներին սովորաբար բնորոշ է լավ հիշողությունը, որն հիմնվում է վաղ խոսքի և վերացական մտածողության վրա: Նրանք հաճույքով են ընդունում բարդ և երկարաժամկետ առաջադրանքները և չեն հանդուրժում, երբ տալիս են պատրաստ պատասխանը: Դա էլ կարող է դասարանում հետագա կոնֆլիկտների հիմք հանդիսանալ:

Օժտված երեխային բնորոշ է նաև ուշադրության կենտրոնացվածության բարձր մակարդակը, արդյունքի ձեռքբերման համառությունը այն ոլորտում, որը նրան հետաքրքրում է: Օժտված երեխան չափազանց լավ է զգում իրեն շրջապատող ամեն ինչ: Դրա պատճառներից մեկն այն է, որ վերջինիս խիստ ուշադիր է ամեն ինչի նկատմամբ: Երբեմն օժտվածն ի զորու է նկատել ու ընկալել այնպիսի չնչին, աննկատ թվացող երևույթներ, որոնց մասին սովորական երեխան նույնիսկ չի էլ մտածում [5. էջ 18]:

Օժտված երեխան ձգտում է շփվել մեծահասակների հետ, քանի որ նրանք հասկանում են իրեն և հիանում իրենով: Իսկ հասակակիցները նրան չեն հասկանում

և հաճախ ծաղրում են, տալիս պիտակներ:

Նման երեխաների հուզականությունը թվում է չափազանցված, նրանք բռնկուն են, կարող են անհեթեթ առիթներից բռնկվել, սակայն դա կամակորություն չէ, այլ ծայրահեղ հուզականության դրսևորում: Ստեղծագործ երեխաները հանգիստ են, նրանք մանկուց սկսած տառապում են իրենց օժտվածության պատճառով:

Թվում է, թե այս երեխաներին բնորոշ է ի ծնե հումորի բարձր զգացումը: Եթե նույնիսկ իրենք հումոր չեն անում, ապա սիրում են լսել և հիանալ թեկուզ փոքրիկ կատակներով:

Հաճախ նրանց բնորոշ է յուրահատուկ խոսքը, հարուստ բառապաշարը: Նրանց առանձնահատուկ մոտորիկան կամ ընկալումը առանձնացնում է իրենց մյուս երեխաներից(Նրանք <<ուտում են նույնիսկ բոլոր երեխաներից տարբեր>>) [6. էջ 382-383]:

Օժտված երեխաներին բնորոշ է լիդերությունը: Հասակակիցների հետ շփման ժամանակ օժտված երեխան հաճախ իր վրա է վերցնում խմբային խաղերի և գործերի ղեկավարի և կազմակերպողի դերը: Հիմնվելով դրա վրա՝ բազմաթիվ հետազոտողներ գտնում են, որ օժտվածներին բնորոշ է ուրիշ երեխաներին հրամայելու ձգտումը: Օժտված երեխայի այդ ձգտման հիմնական պատճառը նրա մտավոր գերազանցությունն է, նրա մտածողության ճկունությունը հասակակիցների համեմատությամբ: Նա ավելի լավ է պատկերացնում խաղային գործողությունների զարգացման առավել արդյունավետ բնույթը, կանխատեսում է հնարավոր սխալները և խաղային վարքի անհամապատասխանությունը, և զգուշացնելով նրանց՝ իր վրա է վերցնում լիդերի դերը: Դա առավել ցայտուն կերպով է դրսևորվում ավագ նախադպրոցական տարիքում [13. էջ 37]:

Օժտված երեխաներին բնորոշ է լավ զարգացած արդարության զգացումը, որն շատ վաղ է դրսևորվում: Նրանց արժեքային համակարգը բավականին լայն է: Նրանք խիստ են վերաբերվում հասարակական անարդարությանը, իրենց և շրջապատողների առջև դնում են բարձր պահանջներ և ակտիվորեն արձագանքում են արդարությանը, ներդաշնակությանն ու բնությանը:

Գոյություն ունեն օժտված երեխաների ֆիզիկական առանձնահատկությունների մասին երկու ստերիոտիպեր՝

1. Փոքրիկ, գունատ, նիհար երեխան է, որը կրում է ակնոցներ,

2. Օժտված երեխաները ավելի բարձրահասակ, ուժեղ, առողջ և գեղեցիկ են, քան իրենց հասակակիցները:

Այդ 2 ստերիոտիպներն էլ հեռու են ճշմարտությունից: Օժտված երեխաների ֆիզիկական առանձնահատկությունները այնքան բազմազան են, որքան և երեխաները:

Այսպիսով, վերլուծելով գիտական գրականության մեջ <<օժտվածություն>>, <<օժտված երեխաներ>> հասկացությունները կարող ենք եզրակացնել, որ յուրաքանչյուր երեխա, իհարկե, անկրկնելի է, սակայն յուրահատկության հետ մեկտեղ կան ընդհանուր առանձնահատկություններ, որոնք բնորոշ են օժտված երեխաների մեծամասնությանը: Ավելին, խորը, թաքնված առանձնահատկությունների հետ մեկտեղ շատ առանձնահատկություններ դրսևորվում են երեխայի վարքում, հասակակիցների և մեծահասակների հետ շփման, ճանաչողական գործունեության մեջ: Եվ այդ առանձնահատկությունների իմացությունը անհրաժեշտ է կրթական գործընթացի ադեկվատ կառուցման, հետևաբար նաև օժտված երեխաների արդյունավետ ուսումնառության համար:

1.2. Մանկավարժի աշխատանքի հիմնական ուղղությունները օժտված երեխաների հետ

Մանկավարժի կողմից երեխայի օժտվածությունը բացահայտելու և աջակցելու կարողությունը նշանակալիորեն օգնում է նրա արդյունավետ ուսումնառությանը: Օժտված երեխաներին բնորոշ են հետևյալ խնդիրները, որոնց շտկման ու կարգավորման ուղղությամբ պետք է աշխատի մանկավարժը՝

- Ագրեսիվ արձագանքների դրսևորումը՝ միջնորդավորված, խոսքային, ֆիզիկական ագրեսիա,
- Դպրոցի նկատմամբ ջերմության բացակայությունը,
- Հասակակիցներից մեկուսացումը,
- Կոնֆորմիզմը,
- Խորացումը փիլիսոփայական խնդիրների մեջ(կրոնական հավատալիքներ, անդրշիրիմյան կյանք և այլն),
- Ֆիզիկական, մտավոր և սոցիալական զարգացման անհամապատասխանությունը,
- Անբավարարվածության զգացումը,
- Գերզգայունությունը,
- Մեծահասակների ուշադրությանը արժանանալու պահանջմունքը և այլն:

Մանկավարժական գործունեության ընթացքում կարևոր է բացահայտել բացահայտ և թաքնված օժտվածությունը, իրականացնել համապատասխան շտկողական աշխատանք, որն ուղղված է օժտված երեխայի արդյունավետ ուսումնառությանը:

Օժտված երեխաների հետ աշխատանքը ընդգրկում է հետևյալ ուղղությունները՝

- օժտված երեխաների բացահայտում,
- խմբային աշխատանք, որն ուղղված է հաղորդակցական կարողությունների, ստեղծագործականության զարգացմանը:

Աշխատանքը ուսումնա-դաստիարակչական գործընթացի օպտիմալացման ուղղությամբ ենթադրում է քայլերը՝

- սովորողների ուսուցման և դաստիարակության անհատական մոտեցման որոշման
- հիշողության, ուշադրության, երևակայության, մտածողության զարգացման համար զարգացնող առաջադրանքների պատրաստում,
- օժտված երեխաների ուսուցման մեթոդների ստեղծում և ընտրություն:

Ե. Ի. Շեբլանովան ընդգծում է, որ կրտսեր դպրոցի երեխաների(որոնց բնորոշ է մտավոր մակարդակի բարձր զարգացումը) մոտ ծագում են յուրահատուկ պահանջմունքներ և խնդիրներ, որոնք, եթե ուշադրության չարժանան, թույլ չեն տա իրացնել նրանց պոտենցիալը [12. էջ 533]:

Ինչպես ընդգծում է Ն. Ս. Լեյտեսն, <<օժտված աշակերտ>> արտահայտությունը բավականին պայմանական է: Այդ տերմինով(վերաբերում է դպրոցականների մտավոր ոլորտին) անվանում են վաղ մտավոր զարգացման բարձր ցուցանիշով, այս կամ այն հատուկ մտավոր հատկությունների վառ արտահայտվածությամբ, գիտական տաղանդի զարգացման բարենպաստ նախադրյալների ցուցանիշներով աշակերտներին: Սակայն, քանի որ այն վերաբերում է երեխաներին, այս բոլոր առանձնահատկությունները նախնական նշանակություն ունեն. դրսևորված առանձնահատկությունները կարող է և չստանան սպասելի զարգացում և մնան չիրականացված [12. էջ 541]:

Այսպես, օժտված երեխաների խնդիրներից մեկը դպրոցական կրթության արդյունավետ կազմակերպումն է: Հաճախ, տաղանդավոր երեխաները ուսուցիչների ուշադրությունը իրենց վրա գրավելու և համադասարանցիների նեգատիվ վերաբերմունքը չառաջացնելու համար, իրենց ընդունակություններից քիչ են աշխատում, որը խոչընդոտում է մանկավարժներին բացահայտել նման երեխաներին: Արդյունքում նրանց հնարավորությունները չեն զարգանում: Երբեմն, ուսուցիչը եթե նույնիսկ նկատում է երեխայի ընդունակությունները, ամեն դեպքում նրա հետ դասի ընթացքում զբաղվելու ժամանակ չի հատկացնում: Նրան ավելի քիչ է դաս հարցնում, քան մյուս աշակերտներին, քանի որ վստահ է, որ այդ երեխան գիտի դասը: Նման աշակերտը կարծես առանձնահատուկ կարգավիճակում է: Արդյունքում նա

մերժվում է աշակերտական կոլեկտիվի կողմից, նրա մոտ ձևավորվում են բնավորության բացասական գծեր, իջնում է առաջադիմության մակարդակը:

Օժտված երեխային անհրաժեշտ կրթությունը կարելի է ապահովել միայն ուսուցման ճկուն մեթոդներով: Այդ համակարգի համար առավել հարմարեցված է գյուղական փոքրիկ դպրոցները, որտեղ տարբեր տարիքի երեխաները սովորում են միևնույն դասարանում: Քաղաքային դպրոցներում արդեն իսկ կիրառվում են էքստեռնատային կամ արագացված ուսուցումը մեկ կամ երկու առարկաներից, սովորողների այցելությունները այն առարկաների բուհական դասախոսություններին, որոնց նկատմամբ դրսևորում են բարձր առաջադիմություն: Արագացված դասարանների մասին 20-րդ դարի սկզբին ռուս փիլիսոփա Վ. Վ. Ռոզանովը գրել է. <<Օժտված աշակերտը ամենևին էլ չի հոգնում իրեն հաճույք պատճառող առարկան ուսումնասիրելով>>: Ըստ նրա՝ օժտվածության զարգացմանը նպաստում են հատուկ դասագրքերը, հատուկ պատրաստվածություն ունեցող ստեղծագործ ուսուցիչները և արդյունավետորեն կազմակերպված ուսումնական գործընթացը [7. էջ124-126]:

Մի շարք դպրոցներում կիրառվում է օժտված երեխաների տեղափոխումը առավել բարձր դասարաններ, սակայն, այս դեպքում առաջանում են մի շարք խնդիրներ: Հայտնվելով մտավոր մակարդակով իրեն համապատասխան դասարան՝ այդ երեխաները ֆիզիկապես և սոցիալապես մնում է իրենց տարիքում: Այդ պատճառով առաջանում են նևրոզներ, հաղորդակցման դժվարություններ, մեկուսացում առօրյա կյանքից, կյանքի խնդիրներից: Բացի այդ, երեխան իր վրա է կրում հսկայական ծավալով նոր տեղեկատվություն, որն առաջ է բերում նյարդային և հոգեկան ծանրաբեռնվածություն:

Օժտված երեխաների հետ աշխատող մանկավարժները պետք է ունենան այնպիսի անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ինչպիսիք են՝

- Խթանել սովորողների ճանաչողական ընդունակությունները,
- Սովորողների շրջանում բացահայտել այն երեխաներին, որոնք ունեն արտակարգ ընդունակություններ կամ սենսորային և շարժողական տարբեր խանգարումներ,
- Գտնել օժտված երեխաների նկատմամբ անհատական մոտեցում,

- Երեխաների հաջողությունները ճիշտ գնահատելու կարողություն,
- Հասակակիցների հետ նրանց փոխհարաբերությունները լավացնելու ընդունակություն,
- Եվ այս ամենի շնորհիվ նպաստել այդ երեխաների դրական սոցիալականացմանը և ուսումնառությանը:

Մանկավարժը պետք է օժտված երեխային սովորեցնի վերլուծել և գնահատել սեփական զգացմունքները, մոտիվացիան, սեփական անձի ուժեղ և թույլ կողմերը, մեկուսացման, եսակենտրոնության դեպքում աջակցել, որպեսզի երեխան աշխատի սեփական բնավորության վրա և այլն: Օժտված երեխաների հետ աշխատելու համար մանկավարժների ընտրությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

- Մանկավարժների դրական Ես-կոնցեպցիան,
- Մանկավարժական աշխատանքի հաջող փորձը,
- Հուզական կայունությունը, նպատակասլացությունը,
- Ստեղծագործականությունը,
- Համապատասխան այն հայեցակարգային մոդելների հետ ծանոթությունը, որոնք կիրառվում են օժտված երեխաների ուսուցման մեջ [17. էջ 49-52]:

Այսպես, օժտված երեխաների խնդիրներից մեկը դպրոցական կրթության արդյունավետ կազմակերպումն է: Օժտված երեխային անհրաժեշտ կրթությունը կարելի է ապահովել միայն ուսուցման ճկուն մեթոդներով: Օժտված երեխաների հետ աշխատող մանկավարժները պետք է խթանեն սովորողների ճանաչողական ընդունակությունները, գտնեն օժտված երեխաների նկատմամբ անհատական մոտեցման ձևերը և ուսուցման արդյունավետ մեթոդները:

1.3 Երեխաների օժտվածությունը որպես մանկավարժական խնդիր

Օժտված երեխաների հետ մանկավարժական աշխատանքի կարևորագույն խնդիրներից է օժտված երեխաների դիագնոստիկան: Այն, ըստ ուսումնական հաստատության՝ իրականացվում է զարգացման մակարդակի որոշման նպատակով, որն հնարավորություն է տալիս գտնել ուսուցման և դաստիարակության համապատասխան մեթոդներ, ստեղծել հատուկ ծրագրեր, տրամադրել աջակցություն :

Օժտված երեխաների բացահայտումը շարունակական մի գործընթաց է, որն առնչվում է կոնկրետ երեխայի զարգացման վերլուծությանը: Օժտվածության բացահայտման հիմնական խնդիրներն առաջին հերթին ուղղված են նրա կարողությունների զարգացման վրա ազդող տարատեսակ գործոնների վերլուծությանը: Այդպիսի գործոններ կարող են համարվել երեխայի դերը ընտանիքում, շրջապատող միջավայրը, մեծահասակների հետ շփման առանձնահատկությունները և այլն: Օժտված երեխաների բացահայտման խնդիրն ունի հստակ ընդգծված էթիկական կողմ: Երեխային որակավորել որպես օժտված կամ ոչ օժտված ժամանակի տվյալ պահին, նշանակում է արհեստականորեն միջամտել նրա ճակատագրին՝ նախապես կանխորոշելով նրա սուբյեկտիվ սպասումները: Պետք է հաշվի առնել, որ մանկական օժտվածությունը չի երաշխավորում մեծահասակի տաղանդը: Հետևաբար, ոչ բոլոր տաղանդավոր մեծահասկներն են մանկության հասակում իրենց դրսևորում որպես օժտված երեխաներ:

Հոգեչափական թեստերը, օժտված երեխաների բացահայտման շրջանակում, կարող են կիրառվել որպես լրացուցիչ տեղեկատվության բազմաթիվ այլ աղբյուրներից մեկը՝ բայց ոչ մի դեպքում որպես միակ չափանիշ՝ որոշում կայացնելու մասին, որ տվյալ երեխան օժտված է կամ ոչ: Օժտված երեխաների բացահայտման ժամանակ առավել նպատակահարմար է օգտագործել համակողմանի մոտեցում: Օժտված երեխաների բացահայտումն անհրաժեշտ է կապել ուսուցման և դաստիարակության խնդիրների, ինչպես նաև նրանց ցուցաբերվող հոգեբանական օգնության և աջակցության հետ [2. 42-46]:

Ժամանակակից դպրոցների պրակտիկայում կարելի է առանձնացնել օժտված երեխաների ուսուցման ձևի ընտրության 3 մոտեցումներ՝

1. Օժտված երեխաները սովորում են հանրակրթական դպրոցում, սակայն անհատական ծրագրով, որն ընդգրկում է որոշակի տարրեր՝ հարստացում և արագացում:
2. Օժտված երեխաների համար հատուկ դպրոցների ստեղծումը՝ լիցեյներ, հատուկ ուղղվածությամբ դպրոցներ և այլն:
3. Ընդգծված ընդունակություններով երեխաների համար ընդհանուր հանրակրթական դպրոցների կառուցվածքում հատուկ դասարանների, ծրագրերի ստեղծումը [18.]:

Առավել հաճախ կիրառվում են հետևյալ մեթոդները՝

1. Ինտելեկտի չափման ստանդարտային մեթոդները: Թեստերն ուղղված են երեխայի ընդունակությունների որոշմանը և այլն: Առավել տարածված մեթոդներից են Ստենֆորդ-Բինեի ինտելեկտի սանդղակները, Սլոսսոնի թեստը, ինտելեկտի Վեկսլերյան սանդղակը և այլն:
2. Ձեռքբերումների ստանդարտային թեստերը դպրոցականների համար: Կիրառում են ուսումնական առարկաների գծով առանձնահատուկ ընդունակությունների բացահայտման նպատակով: Թեստերը նախատեսված են դպրոցին երեխաների պատրաստվածությունը չափելու համար(հիմնական հասկացությունների տիրապետումը, դպրոցական հրահանգների հասկացումը, լսողական հիշողությունը, տառերի ճանաչումը և այլն): Դրանց են վերաբերում ընդհանուր պատրաստվածության որոշման թեստը, Ստենֆորդյան թեստը և այլն:
3. Պերցեպտիվ-շարժողական զարգացման որոշման թեստերը: Դրանք ուղղված են նախադպրոցական տարիքի երեխաների շարժողական ընդունակությունների բացահայտմանը: Չափվում է շարժումների վերահսկման և կարգավորման ընդունակությունը, ձեռքերի, աչքերի շարժումների ուղղորդումը, որն ենթադրում է երկրաչափական պատկերների ստեղծումը, լուսանկարների ավարտելը և այլն:
4. Ստեղծագործական ընդունակությունների չափում(Տորրենսի թեստ): Տվյալ թեստերը նախատեսված են նկարների նախագծման իրականացման որոշման

համար, որն ենթադրում է խոսքային ասոցիացիաների կիրառում, սովորական առարկաների կիրառումը ոչ ստանդարտային խնդիրների իրականացման համար և այլն:

5. Դիտումներ և գրառումներ:

Օժտված երեխաների հետ աշխատանքում մանկավարժը պետք է իմանա և կարողանա՝

- Գտնել օժտված երեխայի հետ փոխհասկացման ուղիներ,
- Շփումներ հաստատել ծնողների հետ,
- Ապահովել մշտական կապ դասավանդողների միջև,
- Ստեղծել պայմաններ նրանց հետաքրքրությունների և ընդունակությունների զարգացման համար,
- Կազմակերպել արտադասարանական և արտադպրոցական աշխատանքում ստեղծագործական գործունեություն և այլն:

Օժտված երեխաների հետ մանկավարժական գործունեությունը ներառում է հետևյալ փուլերը՝

1. Օժտված երեխայի բացահայտում,
2. Օժտվածության ուղղվածության որոշում,
3. Աշխատանքի պլանավորումը համաձայն օժտվածության ուղղվածության ըստ մոտավոր օրինակի՝
    - Շտկողական դաստիարակություն,
    - Գործունեության ընդհանուր կազմակերպում,
    - Գործունեության հատուկ կազմակերպում,
    - Դաստիարակության կազմակերպում,
    - Ուսուցման կազմակերպում,
    - Ծնողների հետ գործունեության կազմակերպում,
    - Կանխարգելիչ դաստիարակություն:
4. Պլանավորած գործունեության կազմակերպում և իրականացում,
5. Գործունեության արդյունավետության ստուգում, գնահատում,

Օժտված երեխաների հետ մանկավարժական աշխատանքը պետք է ուղղված լինի դպրոցական կրթության նկատմամբ հետաքրքրության ստեղծմանը, ճանաչողական այլ ոլորտներում երեխայի պահանջմունքների բավարարմանը, ուսուցիչների օգնությանը՝ ուսուցման մեթոդների և մոդելների ստեղծման և կիրառման գործում, օժտված երեխաների հետ աշխատող մանկավարժ աշխատակիցների կոմպետենտությանը [18.]:

Այսպես, <<օժտվածություն>> երևույթի վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ, ինչպես նաև առանձնացվում են օժտվածության տարբեր տեսակներ: Սակայն, կարևոր է նրանց վաղ բացահայտումը և նրանց առանձնահատկությունների զարգացմանն ուղղված համապատասխան աշխատանքների կազմակերպումը: Օժտվածությունը հանդիսանում է համակարգային խնդիր, որի ուսումնասիրմամբ զբաղվում են հոգեբանները, մանկավարժները, սոցիալական մանկավարժները և այլոք: Օժտված երեխաների հետ մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունն է հանդիսանում օժտված երեխաների արդյունավետ ուսումնառությանն ուղղված ջանքերի միավորումը:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2.1. Հետազոտության նախապատրաստում և փորձարարական աշխատանքի նկարագրություն

Հետազոտության նպատակը:

Մշակել և իրականացնել օժտված երեխաների հետ մանկավարժական աշխատանքի միջոցառումների համակարգ:

Հետազոտության խնդիրները:

Հետազոտության խնդիրներն են՝

- Իրականացնել օժտված երեխաների դիագնոստիկա, բացահայտել օժտվածության ուղղվածությունը
- Պարզել օժտված երեխաներին բնորոշ խնդիրները, որոնք խոչընդոտում են նրանց արդյունավետ ուսումնառությանը:
- Ամփոփել, գնահատել ստացված արդյունքները:

Հետազոտության մեթոդները:

Հետազոտության մեթոդներն են՝

- Դիտում,
- Զրույց,

Ակնկալվող վերջնարդյունքները:

Ակնկալվող վերջնարդյունքներն են՝

- Իրականացնել համապատասխան արդյունավետ մանկավարժական աշխատանք օժտված երեխաների հետ,
- Հստակեցնել օժտված երեխաների հետ մանկավարժի աշխատանքի առանձնահատկությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բրուտյան Ն., Օժտված երեխաների առանձնահատկությունները, Նախաշավիղ, Երևան, 3-4 2009, 118 էջ.
2. Կարախանյան Թ., Օժտված երեխաների բացահայտման մեթոդներն ու սկզբունքները, Նախաշավիղ, Երևան, 3, 2010, 107 էջ.
3. Белова Е. С. , Одаренность малыша: раскрыть, понять, поддержать, Москва, Флинта, 2003, 320 с.
4. Брюно Ж. , Одаренные дети, психолого-педагогические исследования и практика, Психологический журнал, №4, 1995.
5. Бурменская Г. В. , Слуцкий В. М. , Одаренные дети, Москва, Прогресс, 1991, 376 с.
6. Василькова Ю. В. , Василькова Т. А. , Социальная педагогика, Москва, Академия, 2000, 440 с.
7. Василькова, Ю. В. , Методика и опыт работы социального педагога, Москва, Академия, 2001, 160 с.
8. Воронин А. С. , Словарь терминов по общей и социальной педагогике, Екатеринбург, 2006, 135 с.
9. Гильбух Ю. З. , Внимание: одаренные дети, Москва, Знание, 1991, 254 с.
10. Голубева Э. А. , Способности. Личность. Индивидуальность, Дубна, «Феникс+», 2005, 512 с.
11. Грабовский А. И. , К вопросу о классификации видов детской ояаренности, Песагогика, № 8, 2003. http://www.portalus.ru/modules/shkola/rus_readme.php?subaction=showcomments&id=1193140524&archive=1196815207&start_from=&ucat=&,
12. Ильин Е. П. , Психология для педагогов, Санкт-Петербург, Питер, 2012, 640 с.
13. Лейтес Н. С. , Психология одаренности детей и подростков, Москва, Академия, 1996, 416 с.
14. Матюшкин А. М. , Концепция творческой одаренности, Вопросы психологии, Москва, 1993, 160 с. , http://www.voppsy.ru/issues/1989/896/896029.htm,
15. Новокшонова Г. А. , Словарь социального педагога, Пермь, 2000, http://didacts.ru/dictionary/1016/symbol/206,

16. Савенков А. И. , Одаренные дети в детском саду и школе, Москва, Академия, 2000, 232 с.
17. Салтыкова-Волкович М. В. , Методика работы социального педагога, Гродно, 2004, 63 с.
18. Сапожников И. , Основы социально-педагогической деятельности, http://uchebnikionline.ru/pedagogika/osnovi_sotsialno-pedagogichnoyi_diyalnosti_-_shevtsiv_zm/tehnologiya_diyalnosti_obdarovanimi_ditmi.htm#602,
19. Юркевич В. С. , Одаренный ребенок: иллюзии и реальность: Москва, Просвещение, 1996, 136 с.
20. http://cito-web.yspu.org/link1/metod/met121/node33.html.
21. http://all-psychology.ru/lichnost/sposobnosti/ponyatie/razlichiya.html.
22. http://nfo.agni-age.net/lectures/lecture/2007/05.shtml.